

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պատ-Արտուրի անկամիր:—Ծովապես Բուժեստինսկին Մադակասկարի մօ:—Քո-
զախալան ընդհանուր դրութիւնը:—Լուիզա Միչելի մաճ:

Ութ ամսուայ պաշարումից յետոյ, գեկտեմբերի 20-ին
ընկաւ Պորտ-Արտուրը գեներալ նոդիի յամառ և սիստեմատիկ
հարուածների տակ: Յաղթող ճապոնացին ոչ առաջին անգամ
ասպետական վեհանձնութիւն ցոյց տուաւ իր քաջ ախոյեանին:
Խուս գեներալներին և օֆիցէրներին իրաւունք էր տրուած
պատուվ թողնել բերդը և վերադառնալ հայրենիք, եթէ խօսք
տան մինչև տյա պատերազմի վախճանը չմասնակցել կռուին:
Այդ խօսքը տուին գեներալ Ստեսսէլի հետ և բազմաթիւ օֆի-
ցերներ, իսկ գեներալներից Սմիրնովը, Ֆոկը, Գորբատովսկին
և Վիրէնը գերադասեցին բաժանել գերութեան գառնութիւն-
ները իրանց զինուորների հետ միասին: Բերդի պաշտպանու-
թեան ոգին՝ գեներալ Կոնդրատենկօն սպանուել էր մի քանի
օր առաջ: Կապիտոլիացիայի (անձնատութեան) մանրամաս-
նութիւնները ցոյց տուին որ թէն գեներալ Ստեսսէլը ունէր
գեռ ևս բաւական բրինձ, ալիւր, աղ, 2 հազար ձի, 546 թըն-
դանօթ և առատ ռազմական պաշար, սակայն, երբ ճապոնացի-
ները տիրեցին գլխաւոր ամրութիւններին, նա այլ ևս աննպա-
տակ համարեց շարունակել արիւնեղութիւնը և գերադասեց
անձնատուր լինել իր 25 հազար զօրքով, որի մեծ մասը հի-
ւանդ էր կամ վիրաւոր: Եւ այսպէս ընկաւ այն ամրութիւնը,
որ տասը տարի շարունակ կռուախինձոր էր դառել Հեռաւոր
Արևելքում: Զի կարելի չխոստովանել որ արջի ծառայութիւն
մատուցին Ռուսաստանին նրա բարեկամ Ֆրանսիան և Գեր-
մանիան, որոնք 1895 թուականին խլեցին յաղթող ճապոնա-
ցու ձեռքերից համաշխարհային ողբերգութեան այդ բեմը,
յանձնելով Ռուսաստանին, որպէս զի շարունակուի նրա վրաց
արիւնահեղ ներկայացումը ի մեծ ուրախութիւն արիւնուշա-
ջոն-Բուլի...

Հետաքրքրական է ուսս հասարակական կարծիքի վերա-

բերմունքը դէպի այդ սարսափելի հարուածը. միշտ կեղծ շովինխստները ձև Սուվորի և Գրինգմուտ ի հարկէ շտապեցին ցոյց տալ որ առանձին ոչինչ չի պատահել, և թէ «եապոշկաներին» այնուամենայնիւ պէտք է ջարդ ու փշուր անել, և այլն և այլն, սակայն սուս գիտակցող դասակարգի լաւագոյն ներկայացուցիչները շատ լուրջ նայեցին, հարցին, և քաջութիւն ունեցան տուանց յուսահատական կամ կեղծ հայրենասիրական աղաղակների պարզել ցաւալի երեսոյթի նշանակութիւնը: Ահա ինչ ասաց, օրինակի համար, «Բյու. Եֆ.» թերթը. «Պորտ-Արտուրը—Ռուսաստանը չէ: Ռուս ժողովրդի մեծամասնութեան համար դա ինչոր հեռաւոր, անյայտ, անհասկանալի և խորթ մի բան է: Զինական հողի ինչոր մի կտոր, ուր մենք անձնավստահութեամբ մտանք, այնտեղ խրուկու նպաստակով: Զի լինի Պորտ-Արտուրը—միայն աւելի պակաս հոգսեր և ծախքեր, կ'ունենանք: Սակայն Ռուսաստանը չի մոռանալ: այդ ահռելի սպանդանոցը, անհեռատես բաղաքաքանութեան այդ տրապիկական վախճաննը, ժողովրդական այդ ծանր և զուր զոհերը: Այդ զոհերը—միաժամանակ և մեծ դասեր են: Նրանք պէտք է մեզ խելքի բերեն, պէտք է համոզին մեզ բոլորիս, որ ոչ այն տեղ, մեզ խորթ հեռաւոր Արևելքում, պէտք է մենք տեսնենք մեր նպաստակները, որոնենք մեր բարօրութիւնը, մեր կորուստով աշխատենք խելք օտար և մեզ անպէտք հողեր, այլ այս տեղ, Ռուսաստանում, մեր մէջ, մեր հոգի վրայ, պէտք է մենք մտածենք մեր սեփական վերաշխնութեան մասին:

Այդ նոյն օրը, երբ կատարվում էր Պորտ-Արտուրի յանձնումը ճապոնացիներին, ծովակալ Ռոժեստվենսկու նաւատորմը հասել էր արդէն Մադագասկար կղզու ափը, իսկ Ֆելիքրամը իր նաւատորմղով Զիրուտից ճանապարհ էր ընկել նպատակ ունենալով նոյն կղզին: Այժմ հարց է ծագում. միտք ունի՞ որ Ռոժեստվենսկու շարունակի իր ճանապարհը դէպի Վլագիմուտից թէ աւելի լաւ է նա վերադառնայ կամ սպասի երրորդ նպատորմղին...

Մինչ այդ երկու պետութիւնների վիթխարի պայքարը շարունակում է ամեն օր արեան և աւերութեաների սոսկալի տեսարաններ՝ ներկայացնել—միւս պետութիւնները զբաղուած են իրանց տնային փոքրիկ գործերով, իւրաքանչիւր իր սեփական ցաւերի յետնից է ընկած: Ֆրանսիան գտնում է, որ եռոքը արդէն բաւականաշափ սեղմեց կղերականութիւնը, իսկ սոցիալական բեֆորմների համար այլ գեկավարներ են հարկաւոր: Աւտորօ-Ռևունգարիան տարուքերուսմ է բիւրովրատիական՝

սահմանադրական անվերջ անկարգութեան մէջ և, ինչքան էլ փոփոշ խում է իր առաջին մինիստրներին, ինչպէս այժմ Կեօրբերին, այնուամենայնիւ ներքին անզորութիւնը չի վերականգնաւմ, որովհետեւ մի անլուծելի պրոբեմ է դրեւ իր առաջ—իրաք հետ կապել կուլտուրական աղգութիւններ, նոյն համակենցաղում անհաւասար իրաւունքներ չնորհելով. զրանց, Գերմանիան զարդացնում է իր գեղեփատմախէրութիւնը Մերձաւոր Արևելքում և շարունակում զօրք ուղարկել Շայրագոյն Աֆրիկա, մի ինչ-որ սևամորթ ցեղ ոկուլտուրական միջոցներով Ֆատէրլանդիա գրաստներ գարձնելու նպատակով. Խտալիալում արմատական և բանուորական շարժումները չեն կարողանում սահմանադրական կարգով զօրիդ նուաճումներ անել... Անգլիան գրաղուած է իր զօրքերի և նաւատորմիլի ուժեղացման և վերակազմութեան հարցերով. Թիւրքիան սուսիկ-փուսիկ քրէփորմներ է մտցնում Մակեդոնիայում և իր ասիսկան սահմանքներում, ուր քրդի և տաճկի զէնքից մաղաղուրծ եղածին սովու ու ցուրան է ապանում. Մի խօսքով ամեն բան գնում է իր կարգով,—բոլորն էլ իրքն թէ երջանիկ են... Եւ զարմանալի է որ բոլոր մարդիկ այնքան լաւատեն չեն, որ ներքին հրճուանքի աղգեցութեան տակ տըրտիսկներ տան ու... գտնուում են յուետեսներ...

Այդ յուետեսները չափազանց գանդաղաշարժ են համարում սոցիալական էվոլյուցիայի առաջնադաշումը, յոյս չունեն որ նոյնիսկ սահմանադրական կարգերով յաղթանակի արդարութիւնը երկրի վրայ Եւ անա մի և Տոլսոյ անհատի ներքին-բարյոյական վերածնութեան մէջ է գտնում վրկութիւնը, մոռանալով որ այդ ներքին-բարյոյական ինքնակատարելագործութեան համար անհամարեշտ է անհատի կատարեալ ազատութիւնը, որ ապահովում են միայն սահմանադրական կարգերը. մի կուիզա Միշէլ աւելի հեռու է գնում չարիք համարելով նոյնիսկ որ և հասարակական կազմակերպութեան գոյութիւն: Այդ նշանաւոր անիշխանականը վախճանուեց եօթանառուն տարեկան հասակում: Նա մինչև վերջ անվեհեր բարողիչ էր իր համոզմունքների, պատրաստ էր զէնքը ձեռքին կուտել բարրիկադների վրայ: Բազմաթիւ անգամ բանտարկուած, աքսորուած վարանսիայից, նա ամեն տեղ շարունակում էր իր զօրծունէութիւնը, պահպանելով իր ապրուստը դասերով և գրական աշխատանքով: Նրա գրչին պատկանում են մի քանի վէպեր, որոնց մէջ նա բնականաբար համդիսանում էր իրքն ներկայ հասարակական-քաղաքական ամեն տեսակ կարգերի ամենախիստ քննադատ: Իրքն անհատական ազատութեան ամենածայրայեղ ջատագով՝ նա ընկերագավ-

բութիւնը նոր ձեփ սարկութիւն էր համարում մարդկութեան. համար!

Լուիզա Միշէն, ինչպէս և նրանից շատ առելի հանճարեղ մոածողներ, անշուշտ սխալում էր իր աեսութիւնների և ձգութումների մէջ, սակայն մվ է այն մարդը որ ըմբռնի ճշմարտութիւնը ամբողջապէս Այդպիսի մի անհատ չի տուել ամբողջ մարդկութիւնը, սկսուծ իր գոյութեան առաջին օրից, և, եթէի, երբ էլ չի տալու... ճշմարտութիւնը ընդգրկել ամբողջապէս նշասակում է հասկանալ անսահման տիեզերքը, վճռել մարդկային երջանկութեան իդէալը, իսկ մը է այդ իդէալը—բացարձակ որոշում չի տալ և ոչ մի փիլիսոփայի Այն ինչ մեզ համար իդէալ է համարւում, արդեօք իդէալական կը լինի ապագայ և սրունդների համար էլ. այդ մենք չենք կարող վճռականապէս յայանել: Ամեն բան համեմատական է, հետևաբար ծաղր ու ծանակի կամ բացարձակ դատապարտութեան չեն արժանի կուիզա Միշէլի նման անձնաւորութիւնները, որոնք իրանց մոլորութիւններով անդամ մատնանիշ են անում հասարակական հիւսուածքի այլանդակութիւնները. իսկ քննադատութիւնը առաջադիմութեան մի տարրն է...

I. U.